ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«18» հունիսի 2019 թվականի N: 265-Ա ք.Գյումրի

ՎԱԼԻԿՈ ՆԵՐԳԱԶԵԻՆ «ՍԱՄԱՐԻԹԵՐ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Նկատի ունենալով, որ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 25-ի N 573-Ա որոշման համաձայն «Սամարիթեր վերականգնողական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունը վերակազմակերպել է «Գյումրու բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության հետ՝ միացման ձևով, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավանբանական անձանց պետական ռեգիստրի 2019 թվականի հունիսի 11-ի պետական միասնական գրանցամատյանի քաղվածը՝ «Սամարիթեր վերականգնողական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության գործունեությունը դադարեցնելու վերաբերյալ, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և 126-րդ հոդվածի, «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի 1-ին կետի «թ» ենթակետի դրույթներով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. 2019 թվականի հունիսի 18-ից Վալիկո Ներգաձեին ազատել «Սամարիթեր վերականգնողական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի պաշտոնից՝ լուծելով նրա հետ 2015 թվականի սեպտեմբերի 4-ին կնքված N23 աշխատանքային պայմանագիրը:

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է